

պատգամաւորութեան և Պ լիսէն Եգիպտոս և անկէ Հապէշիստան գացած էր :

Բայց անկարելի չէ և ոչ ալ նուազ հաւանական՝ մտածել, թէ Յովհաննէս Թիւթիւնճի զրկուած ըլլալ Ֆրանսայի մէջ Հոյերու փրկութեան համար գործող անձերու կամ նոյնիսկ ֆրանսական կառավարութեան կողմէ : Վասնզի ըստ Յ. Նալբանդեանի (իր նամակը՝ 23 Յունիս 1945) «Հայոց յարաբերութիւնները Եգիպտոսի Ֆրանսական հիւպատոսին հետ սովորական էին ժէ. եւ ժԼ, դարեւուն, որովհետեւ Եթովպիոյ կայսրերը Հայ պաշտօնիւններու միջոցով Ֆրանսական արեւմտեաններու հետ յարաբերութիւն կը պահէին» և կրնանք աւելցնել փոխ սգարձարձ ֆրանսական հիւպատոսներ Հոյերը գործիք կ'ընէին Եթովպիոյ հետ քաղաքական յարաբերութիւններ ստեղծելու համար :

Ինչ որ ստոյգ է, սա՛ թէ հայ եպիսկոպոսը 1678—1680 Հոպէշիստան ուղեւորելէ յետոյ կը դառնայ Լիվօւնո (Իտալիա), ուրկէ հաւանօրէն անցած է Լեհաստան և ապա Ֆրանսա, եթէ Լեհաստանի թագաւորը զինք զրկած էր, կամ գացած է ուղղակի Ֆրանսա, եթէ ձեռնարկը հոն գոն ուղնելուն հրահանգով կոտորած էր : 1633ի աւաջին ամիսներուն զինք կը գտնենք Վերսայլ՝ Ֆրանսայի արքայանիստ քաղաքին մէջ :

Դժբախտաբար Յովհաննէս եպս. Թիւթիւնճի իր այս առաքելութեան մասին ոեւէ շօշափելի փաստ չէ տուած, միայն իր ճամբորդութեան պատմութեան մէջ մի քանի նշանակելի տեղեր կան, որոնք մասամբ իր քաղաքական առաքելութիւնը հաստատելու բնոյթը ունին : Հազիւ Եթովպիոյ սահմանագլուխը՝ Դիվարպատ հասած, կ'ըսէ թէ «Հապաւի բազաւորին վե-